ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 5 նիստի, կայացած 2025թ. Սեպտեմբերի 26 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Ա. Մարգարյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Հ. Սահակյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի 1/մեկ/ միավոր քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,441 հա / ծածկագիր 10-025-0130-0026 / գյուղատնտեսական 5-րդ կարգի վարելահողերը փոխադրել գյուղատնտեսական խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի գյուղատնտեսական խոտհարք է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված 0,441 հա գյուղատնտեսական վարելահողը, ծածկագիր 10-025-0130-0026, որը հանդիսանում է քաղաքացի Արսեն Հայրապետյանի սեփականությունը՝ դասել գյուղատնտեսական խոտհարքների շարքին:

Առաջարկվեց Արենի համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Արենի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում

համայնքի 1/մեկ/ միավոր քաղաքացի Արսեն Հայրապետյանի սեփականություն հանդիսացող 0,441 հա / ծածկագիր 10-025-0130-0026 / գյուղատնտեսական 5-րդ կարգի վարելահողը փոխադրել գյուղատնտեսական խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողի սեփականատիրոջը՝ համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Քարտուղար՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ